

ՆՈՐ ԳՐՔԵՐԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՆՈՐԱՅՐ ԱՄԱՆՑԱՆ — «Սովետաճայ պատմվածք», Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն,
1968 թ., տպաքանակը 2000, 232 էջ:

Իր այս մենագրության մեջ երիտասարդ բանասերը սովետաճայ պատմվածքի հիսունամյա անցած ուղին բնորոշում է որպես իսկական վերելքի, բայց միևնույն ժամանակ նաև որոնումների տարիներ:

Գրքի առաջին շորս գլուխներում վերլուծվում և բնութագրվում է 20—30-ական թվականների պատմվածքը, հաջորդներում՝ Հայրենական պատերազմի տարիների և ապա մեր օրերի փոքրածավալ արձակը:

«Արդիականության ուղիներում» վերնագիրը կրող առաջին գլխում հեղինակը 20—30-ական թվականների սովետաճայ գրականությունը համարում է «երկու աշխարհի սահմանագծում» հառնած երևույթ, որը բազմաթիվ խնդիրների շարքում լուծում է նաև երկու աշխարհների միջև բնականորեն գոյություն ունեցող «վեճեր»: Ահա այս «վեճերն» են, որ արտացոլվել են փոքր ծավալի արձակում՝ պատմվածքի ժանրում:

20-ական թվականների պատմվածքը, աշխարհի և կյանքի վերաբերյալ դարերով ստուգված ժողովրդական կենսափիլիսոփայությամբ, նվաճեց նոր բարձունքներ: Այս տեսակետից առանձնահատուկ հետաքրքրություն են ներկայացնում Դ. Դեմիրճյանի պատմվածքները, իսկ դրանց թվում «Հողը» պատմվածքը, որ Դեմիրճյանը առաջիններից մեկն էր, որ հերոսի ճակատագիրը դիտեց աշխատանքի մեջ և նոր մարդուն պատկերեց իր առօրյա գործունեության հետ սերտորեն առնչված: Ապա Ադալյանը մանրակրկիտ վերլուծում է Մ. Թորգոմյանի, Մ. Արազու, Ա. Բակունցի, Արաբսի և այլոց այս շրջանի պատմվածքները և յուրաքանչյուրին բնորոշում իրեն հատուկ երանգով:

20—30-ական թվականների արվեստագետների և գրողների կապը արդիականության հետ, թերևս, առավել որոշակիությամբ արտահայտվել է երկու աշխարհների դրամատիզմով հարուստ բախումների, այդ բախման հակադիր կողմերի պատկերման և բացահայտման մեջ: Եվ ահա որոշ գրողներ այդ դրամատիզմը արտահայտել են իրենց ստեղծագործությունների համար ընտրելով երգիծանքի ժանրը: Այդ տարիներին են ստեղծվել Չարենցի «Երկիր Նաիրին», Դեմիրճյանի «Քաջ Նազարը», Շիրվանզադեի «Մորգանի խնամին», Բակունցի «Կյուրես» երգիծական տարեգրությունը, Մ. Դարբինյանի «Կիկոսը» վիպակը և այլ ստեղծագործություններ, որոնցում վերարտադրվում են ժամանակի դրամատիկ անցքերն ու իրադարձությունները:

«Ժողովրդական աշխարհի հետքերով» գլխում հեղինակը ժամանակի շունչն է համարում «ապրողներ»-ին և «անցվորներ»-ին վերաբերող պատմվածքները: Եվ այս տեսակետից արժեքավոր է համարում Վ. Թոթովենցի «Գավառական ողբերգություն», «Միտանի ծառ», «Աղավնիներ», «Երկու գերեզման», «Բաց-կապույտ ծաղիկներ» և այլ գործեր, ինչպես նաև Ա. Բակունցի մի շարք պատմվածքները, որոնք ստեղծվել են ազգային մեջ համամարդկային որոնելու և գտնելու սկզբունքով:

Պատմվածքների այս խմբի հետ են առնչվում նաև՝ այսպես կոչված, խոհական-փիլիսոփայական պատմվածքները: Այս տեսակետից որպես հատկանշական օրինակներ հեղինակը նշում է Ավ. Իսահակյանի արձակ էջերը, Դ. Դեմիրճյանի «Գիրք ծաղկանցն» ու «Ջարգլահը», Ստ. Զորյանի և Ա. Բակունցի լավագույն պատմվածքները:

«Մարդը և պատերազմը» գլխում հեղինակը քննարկում է առաջին համաշխարհային պատերազմի իրադարձությունները պատկերող պատմվածքները: Որպես մարդկային հոգիներում պատերազմի բերած ահելի ավերածության օրինակ, նշում է Դեմիրճյանի «Ավերորդը» պատմվածքը: Ապա այս գլխում հանդամանորեն խոսվում է Ստ. Զորյանի «Պատերազմ» պատմվածքաշարի մասին:

20—30-ական թվականների պատմվածքներում նկարագրվող բնությանն է նվիրված «Բնություն», բնապաշտություն, աշխարհապաշտություն» գլուխը: Այսպիսի պատմվածքների տիպիկ

օրինակներ հեղինակը համարում է Ստ. Զորյանի, Ա. Բակունցի մի շարք ստեղծագործություններ:

«Հերոսամարտի գրականություն» — այսպես է կոչվում Ն. Ազալյանի «Սովետահայ պատմվածքը» գրքի այն գլուխը, որում վերլուծվում են Հայրենական պատերազմի տարիներին գրված պատմվածքները:

Հայրենական պատերազմի շրջանի արձակում առանձնանում է Հրաչյա Քոչարի ստեղծագործությունը, որին բնորոշ է խոհի ու տրամադրության, վիճակի ու եզրակացության պաթետիկ, հրապարակախոսական շունչը:

Ժամանակի հերոսականությունն իր արտահայտությունը գտավ նաև Ն. Զարյանի, Գ. Սարյանի, Հ. Շիրազի և մյուսների պոեզիայում: Այնուամենայնիվ, կյանքի թելադրանքով, պատմվածքի ժանրը պատերազմի առաջին իսկ օրից դարձավ առաջատար գրական ժանր:

Մենագրության վերջին գլուխը կոչվում է «Նորարարություն և ավանդներ», ուր էլ մի են բերված ետպատերազմյան տարիներին տեղի ունեցած գրական բանավեճերը և մի շարք գրականագետների ու գրողների կարծիքները գրական ավանդների պահպանման կամ ժխտման վերաբերյալ, ինչպես նաև՝ ընդգծված է հայ գրականության մեջ սկսված շրջադարձը՝ դեպի նյութի խորքը, դեպի լարված մտածմունքը:

Ավարտելով իր ուսումնասիրությունը, հեղինակը եզրակացնում է, որ հիսունամյա ճանապարհ անցած սովետահայ պատմվածքը իր նվաճումներով կանգնած է գեղարվեստական զարգացման բարձր ու հետաքրքիր աստիճանի վրա:

«Հայ ժողովրդական հեքիաթներ», հատոր IX, Հայկական ՍՍՀ ԳԱ հրատարակչություն, 1968, տպաքանակը՝ 1500, 650 էջ:

«Հայ ժողովրդական հեքիաթների» գիտական հրատարակչության իններորդ հատորն ընդգրկում է պատմական Հայաստանի Բագրևանդ գավառի (Ալաշկերտ) և Մանազկերտի ու Բաղնջի (Բիթլիս) ժողովրդական հեքիաթները:

Այս հատորի համար հիմնականում բնագրեր են ծառայել բազմավաստակ գիտնական, ազգագրագետ և բանասեր-բանահավաք Նրվանդ Լալայանի 1915—1916 թթ. ղեկավարած բանահյուսական արշավախմբի նյութերը: Ներկա հատորի բնագրերը, որ պահպանվել են Հայկական ՍՍՀ ԳԱ հնագիտության և ազգագրության ինստիտուտի ժողովրդական բանահյուսության արխիվի նրվանդ Լալայանի ֆոնդում, Ալաշկերտի, Մանազկերտի, Բաղնջի և Կարինի բարբառներով գրի առնված հեքիաթներն են, որոնք տպագրվում են առաջին անգամ: Բացի այդ, հատորում տեղ են գտել նաև Լալայանի և Հայկունու հավաքած մի քանի հեքիաթներ, որոնք տպագրվել են հայտնի «Մարգարիտներում», «Էմինյան ազգագրական ժողովածուի» երկրորդ և չորրորդ հատորներում: «Հայկական ժողովրդական հեքիաթների» իններորդ հատորի մեջ գետնից են նաև Վ. Բղոյանի և Ա. Ղանալանյանի բանահյուսական գործուղումների ժամանակ Աշտարակի, Ախուրյանի, Բոգդանովկայի շրջաններում գրի առած նյութերը, որոնք տպագրվում են առաջին անգամ:

Ժողովածուն ունի հետևյալ կառուցվածքը.

1. Հիմնական տեքստեր, որտեղ գրված են՝

ա) Ալաշկերտի հեքիաթները, թվով 44:

բ) Մանազկերտի գավառի հեքիաթները, թվով 25:

Հիմնական տեքստերից հետո գալիս է հավելվածների բաժինը

Առաջին հավելվածում տպագրված են Ախալքալաքում գրի առնված հեքիաթները, իսկ երկրորդում՝ Ալաշկերտի, Մանազկերտի և Բաղնջի այն հեքիաթները, որոնք բովանդակությամբ թույլ են և չունեն գեղարվեստական այն արժեքը, ինչ որ հիմնական տեքստերի բաժինը: Բացի այս, հատորն ունի ծանոթագրություններ, որտեղ հերթականությամբ տրված է յուրաքանչյուր հեքիաթի մասին եղած տեղեկությունները՝ ժամանակը, վայրը, պատմողը, ինչպես նաև բառարան, ուր բացատրվում են հատորում եղած բարբառային դժվար հասկանալի բառերը:

«Հայ ժողովրդական հեքիաթների» ներկա հատորը տպագրության պատրաստել և առաջաբանը գրել է բանասիրական գիտությունների թեկնածու Մ. Ս. Մկրտչյանը, հատորի խմբագիրն է Ս. Ս. Տարոնցին: